ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2020թ. **N -----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2019** ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ **25-**Ի **N 178-**Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» N178-Ն որոշման հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 24-49-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները:

Հիմք ընդունելով նշվածը, Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով հաստատվել են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր և Երևանի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման հավելվածի 44-րդ կետով 2020 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում է ներառվել Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2019 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը:

Ներկայումս ներկայացվում է համայնքային սեփականություն հանդիսացող թվով 26 հողամասերի վերաբերյալ ցանկ և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներից ելնելով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման հավելվածի VI-րդ գլխի 2020 թվականի օտարման առաջարկվող հողամասերի ցանկը լրացնել 24-49 կետերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
„____„ _____2020թ.
N _____-Ն որոշման

24	Աջափնյակ	01-001-023-170	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Հալաբյան փող հ.3	
25	Արաբկիր	01-003-113-040	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Աղբյուր Սերոբի փող. հ.46/1 հասցեին կից	
26	Արաբկիր	01-003-113-043	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Աղբյուր Սերոբի փող. հ.46/1 հասցեին կից	
27	Արաբկիր	01-003-113-051	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Աղբյուր Սերոբի փող. հ.44/3 հասցեին կից	
28	Արաբկիր	01-003-113-120	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Աղբյուր Սերոբի փող. հ.46/1 հասցեին կից	
29	Արաբկիր	01-003-127-007	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Գուլակյան փող. հ.7/4 հասցեին կից	
30	Կենտրոն	01-006-001-018	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Վերին Անտառային փողոցին հարող տարածք	
31	Դավթաշեն	01-004-119-002	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Ա. Իոսիֆյան փող. հ.46 հասցեին կից	
32	Դավթաշեն	01-004-119-030	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Ա. Իոսիֆյան փող. հ.46/1 հասցեին կից	
33	Էրեբունի	01-005-052-1123	Բնակավայրերի	Խառը կառուցապաում	Սարի թաղի 5-րդ շարքի հ.51/2 հասցեին կից	
34	Էրեբունի	01-005-121-013	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Դավիթ Բեկի հ.67 հասցեին հարակից	
35	Էրեբունի	01-005-121-1010	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Դավիթ Բեկի հ.67 հասցեին հարակից	
36	Էրեբունի	01-005-1097-001	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Դավիթ Բեկի հ.67 հասցեին հարակից	
37	Էրեբունի	01-005-216-004	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Սուվորովի փող. հ.2 հասցեին կից	

38	Էրեբունի	01-005-221-012	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Տիգրան Մեծի պող. հ.11/8	
39	Էրեբունի	01-005-369-026	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Նոր Արեշի 24-րդ փող. հ.52 հասցեին կից	
40	Կենտրոն	01-006-048-004	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Վ. Անտառային փողոցի հ. 126 և հ.121/6 հասցեներին հարող տարածք	
41	Կենտրոն	01-006-048-043	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Վ. Անտառային փողոցի հ. 126 և հ.121/6 հասցեներին հարող տարածք	
42	Կենտրոն	01-006-048-044	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Վ. Անտառային փողոցի հ. 126 և հ.121/6 հասցեներին հարող տարածք	
43	Կենտրոն	01-006-048-384	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Վ. Անտառային փողոցի հ. 126 և հ.121/6 հասցեներին հարող տարածք	
44	Մալաթիա-Սեբաստիա	01-007-0063-0013	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Հաղթանակ 11-րդ փողոց հ.11/1	
45	Մալաթիա-Սեբաստիա	01-007-282-123	Բնակավայրերի	Հասարակական կառուցապաում	Լենինգրադյան փող. հ.27/2	
46	Մալաթիա-Սեբաստիա	01-007-420-026	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Սեբաստիա փողոց հ.108/1	
47	Մալաթիա-Սեբաստիա	01-007-442-1467-001	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատում	Սեբաստիայի փողոց հ.140	
48	Շենգավիթ	01-011-525-020	Բնակավայրերի	Բնակելի կառուցապաում	Արին Բերդի փող. հ.2-րդ նրբ. հ.50/2	
49	Շենգավիթ	01-011-0394-006	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Արդյունաբերական օբյեկտներ	Թամանցիների փող. հ.86/1 հասցեին կից	

»:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի էական փոփոխություններ չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**